Ծառ հավատո

Սերժ
ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լրագրող

Վերջին երեք տարում շա՜տ եմ հանդիպել փախստականների, տեսել բռնագաղթի ճանապարհների սարսափներն ապրած մարդկանց, և ամեն անգամ սիրտս սեղմվել է ցավից: Իմ կյանքն աղքատ կլիներ, եթե չհանդիպեի նրանց, չտեսնեի մայր հայրենիքում երջանկության հույսով ողողված նրանց աչքերը:

Ում հետ էլ հանդիպել եմ, զգացել եմ, որ բոլորն էլ քչով բավարարվող, բարեհիղճ ու աշխատասեր մարդիկ են, որոնց ներսում վերքեր են մխում՝ կորցրածի ցավը: Իսկ նրանք շատ բան են կորցրել՝ տուն ու այգի, դարեր ի վեր սեփական ձեռքերով մշակած ու ծաղկեցրած հայրենի հող ու պապերի գերեզմաններ: Այդ ամենը հայրենիք է, հայրենի եզերք: Այդ ամենը թողել են ու եկել, կաթիլ-կաթիլ հավաքվել, մեկտեղվել ու դարձել գյուղ՝ մայր Հայաստանում: Ու հիմա մենք պարտավոր ենք մեր արյունակիցներին ամեն ինչով օգնել, սատար կանգնել նրանց:

Լրագրողի իմ աշխատանքը ինձ հնարավորություն է տալիս լինելու մեր հանրապետության շատ շրջաններում, որոնք վերաբնակեցված են փախստականներով, և կարող եմ բազմաթիվ օրինակներ բերել, թե ինչպիսի մեծ ու անգնահատելի օգնություն են ցույց տվել փախստականներին առաջին հերթին տեղաբնակները. մարդիկ մինչև անգամ իրենց բնակարանն են տրամադրել, օգնել սննդով, հագուստով, դրամական միջոցներով: Ամեն ինչ արվել է, որպեսզի մեր հայրենակիցներն իրենց լավ զգան: Այս ամենը խորապես մարդկային է: Սակայն սա դեռևս հարցի լուծում չէ: Այսօրվա դրությամբ շատ լուրջ խնդիրներ են ծառացել՝ կապված փախստականների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման հետ: Այս մասին շատ է խոսվել ու գրվել: Հետո՞, սայլը ե՞րբ է տեղից շարժվելու: Լուրջ խնդիրները կարելի է լուծել միայն պետական մակարդակով, մի բան, որ առայժմ չի զգացվում: Այսօր նախկին ադրբեջանական գյուղերում վերաբնակեցված փախստականների մի մասն ապրում է դպրոցի [illegible] ակումբի հին շենքերում՝ ամենատարրական պայմանների [illegible] Անորոշ է [illegible] նրանց ճակատագիրը՝ մնա՞ն գյուղում, թե՞ կրկին [illegible] տանող ճանապարհը՝ հարազատների կամ մերձավորների տանը ապաստան գտնելու հույսով, քանի որ իրենք էլ չգիտեն՝ ե՞րբ բնակարան կունենան...

Վերջերս եղա Կրասնոսելսկի շրջանի մի շարք գյուղերում: Շուրջ 7000 փախստականներ կան շրջանում, նրանցից 2500-ն է ապահովված մշտական աշխատանքով: Միայն շրջկենտրոնում բնակություն են հաստատել մոտ 70 ընտանիքներ, մի մասը տեղավորվել է այսուայնտեղ, հանրակացարաններում: Նրանց համար ե՞րբ կստեղծվեն բարենպաստ պայմաններ. այս հարցին ոչ ոք չի կարողանում պատասխանել:

Կրկնակի ծանր է շրջանի գյուղերում ստեղծված վիճակը: Չի հերիքում խմելու ջուրը, առաջին անհրաժեշտության ապրանքներ ձեռք բերելը պրոբլեմ է: Մարդիկ զրկված են հեռուստացույց դիտելու, ռադիո լսելու հնարավորությունից: Չափազանց վատ է փոստի առաքման գործը: Մարդիկ շաբաթներով թերթ չեն ստանում, չնայած բաժանորդագրված են: Համարյա բոլոր գյուղերում էլ (Թոխլուջա, Ամիրխեր, Արտանիշ, Ջիլ), որոնք վերաբնակեցված են փախստականներով, հանդիպումների ժամանակ սոցիալ-կենցաղային նույն հարցերն էին բարձրացվում՝ վառելիք չկա, հեռախոսակապը անկանոն է, չի հերիքում խմելու ջուրը և այլն: Գործկոմի ներկայացուցիչը նշումներ էր անում ծոցատետրում, խոստանում, որ այդ հարցերը շուտափույթ կլուծվեն, սակայն մարդիկ արդեն չէին հավատում, նրանց շատ են «կերակրել» խոստումներով:

Տուն ու տեղ կորցրածի, սպանդի սարսափներն ապրածի համար ամենակենսականը գլխավերևում տանիք ունենալն է: Որոշ շրջաններում ըմբռնումով մոտեցան այս հարցին՝ անհատական բնակարանաշինության համար նորաբնակներին հողամասեր բաժանեցին: Օրինակ, Հրազդանի շրջանի մի շարք գյուղերում, այդ թվում և Ալափարսում, ուր փախստականների 15 ընտանիքներ են ապաստան գտել, յուրաքանչյուր ծխի հատկացրել են 1200 քմ հողամաս: Սակայն շինանյութեր չլինելու պատճառով շատերը չեն կարողանում ավարտին հասցնել տան կառուցումը: Այս վիճակը մինչև երբ կշարունակվի՝ ոչ ոք չգիտի:

Ամասիայի շրջանի Գտաշեն գյուղը երկու մասի է բաժանված՝ հին ու նոր թաղամասեր: Հինը ադրբեջանցիների լքած տներն են՝ գորշ, անշուք տեսքով: Նորը երկրաշարժից հետո ուկրաինացի շինարարներն են կառուցել փախստականների համար: Նախկին ադրբեջանական գյուղը վերաբնակեցված է: Մտնում ենք գյուղի հին թաղամասի առաջին պատահած տան բակը: Տունը համարյա կիսավեր է: Նախկին տանտիրոջ սև գործն է:

Վարդենիսի շրջանի Կոչաբուլաղ գյուղի բուժկետը տեղավորված է մի կիսախարխուլ շենքում՝ լուսամուտների ջարդված ապակիներով: Բուժկետի վարիչ Ռիմա Աթաբեկյանը, նախկին բաքվեցի, դողում էր ցրտից, սակայն չէր դժգոհում. «Մենք ամեն ինչի կդիմանանք, ոչ մի տեղ էլ չենք գնա, սա՛ է մեր ամենաապահով տեղը»: Ամենազարհուրելին տեսած ու ապրած Ռիմայի համար կարևորն այն է, որ խաղաղ է բացվում լույսը նրա տան վրա, ապահովված է երեխաների անվտանգությունը:

Այո՛, Ադրբեջանից բռնագաղթված մեր հայրենակիցներից շատերը ըմբռնումով են ընդունում ու գիտակցում այն ծանր կացությունը, որ ստեղծված է մեր հանրապետությունում: Ազետի գոտի, տնտեսական ճգնաժամ ու դաժան շրջափակումներ... Նման իրավիճակում կենսապահովման բոլոր հարցերը միանգամից չես լուծի, հնարավոր չէ, դրա համար ժամանակ է պահանջվում: Այս մասին պետք է ազնվորեն խոստովանել, մարդկանց պետք է ճշմարտությունն ասել՝ որքան էլ այն դառը լինի: Պետք է ջերմությամբ շրջապատել փախստականներին, օգնել և օգնել, որ նրանք ամոքեն իրենց վիրավոր սրտերը: